

Լաբորատոր աշխատանք N°2

Հեղուկի ծավալի չափումը

Աշխատանքի նպատակը

Չափազվանի օգնությամբ չափել տրված հեղուկի ծավալը:

Անհրաժեշտ սարքեր և նյութեր


Անոթի մեջ լցված որոշակի քանակությամբ ջուր, չափազվան:

Աշխատանքի ընթացքը

1. Որոշել չափազվանի բաժանման արժեքը: Այդ նպատակով հաշվել չափազվանի սանդղակի երկու հարևան մեծ գծերի միջև ընկած փոքր գծերի թիվը: Այնուհետև մեծ գծերի դիմաց գրված թվերն իրարից հանել և ստացված տարբերությունը բաժանել փոքր գծերի թվի վրա:

2. Բաժակի ջուրը դատարկել չափազվանի մեջ:

3. Գրանցել չափազվանի ցուցմունքը:



4. Եթե բաժակի ջուրն ամբողջությամբ չի տեղավորվում չափազվանում անհրաժեշտ է ջրի մի մասը լցնել, չափել ծավալը, այնուհետև դատարկել չափազվանը, լցնել բաժակի ջրի մնացած մասը և կրկին չափել: Գումարելով ջրի առանձին մասերի չափված ծավալները, կստանաք ամբողջ ջրի ծավալը: